



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/պատասխաններ/

Հունիս 2026 թ.

Բազմակի ընտրության հարցեր		
Հարց	Պատասխան	Միավոր
1	Ա	2
2	Բ	2
3	Ա	2
4	Ա	2
5	Գ	2
6	Գ	2
7	Ա	2
8	Բ	2
9	Գ	2
10	Դ	2
11	Գ	2
12	Գ	2
13	Բ	2
14	Ա	2
15	Բ	2
16	Դ	2
17	Գ	2
18	Գ	2
19	Գ	2
20	Ա	2
21	Դ	2
22	Բ	2
23	Գ	2
24	Ա	2
25	Դ	2

Ընդամենը՝ միավոր

50

բ) նկարագրել Ղրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ հոսքերի դասակարգման տեսակները ըստ ՀՀՄՍ 7 ստանդարտի և հաշվետվության պատրաստման մեթոդները

Ղրամական հոսքերի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվեն ժամանակաշրջանում դրամական հոսքերը՝ դրանք դասակարգելով ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունների:

Կազմակերպությունը գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեություններից իր դրամական հոսքերը ներկայացնում է այն ձևով, որն ավելի բնորոշ է իր գործունեությանը: Կազմակերպության դրամական հոսքերի՝ ըստ գործունեությունների դասակարգումը օգտագործողներին տրամադրում է տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս գնահատելու գործունեության այդ ձևերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, նրա դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարի վրա: Այդպիսի տեղեկատվությունը կարող է օգտագործվել նաև գործունեության տեսակների փոխադարձ կապերի գնահատման նպատակով:

Ղրամական միջոցներ հոսքերի մասին հաշվետվությունը ընկերության ֆինանսական հաշվետվությունների հիմնական բաղկացուցիչներից մեկը, որը ցույց է տալիս որոշակի ժամանակաշրջանում դրամական միջոցների և դրանց համարժեքների շարժը՝ փաստացի ներհոսքը և արտահոսքը / օրինակ տարվա համար՝ տարվա սկզբի և վերջի միջև/:

Ի տարբերություն ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, որոնք կազմվում են հաշվեգրման սկզբունքով, այն հիմնված է դրամական մեթոդի (cash basis) վրա և արտացոլում է ընկերության իրացվելիությունը:

(0.5 միավոր)

Ղրամական հոսքերը դասակարգվում են ըստ գործունեության երեք հիմնական տեսակների.

- Գործառնական գործունեության դրամական հոսքեր:
Ընկերության հիմնական հասույթ ստեղծող գործունեությունն է: Այդ թվում՝

Ներհոսքը ապրանքների վաճառքից և սպասարկումից ստացված գումարներն են, իսկ արտահոսքը՝ վճարումներ մատակարարներին, աշխատավարձեր, հարկերի վճարումները:

- Ներդրումային գործունեության դրամական հոսքեր:
Երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների առք ու վաճառքն է: Այդ թվում՝

Ներհոսքը հիմնական միջոցների կամ արժեթղթերի վաճառքից ստացված գումարներն են, իսկ արտահոսքը՝ նոր սարքավորումների, անշարժ գույքի կամ այլ ընկերությունների բաժնետոմսերի գնումները:

- Ֆինանսական գործունեություն դրամական հոսքեր:
Ընկերության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխությունն է: Այստեղ ներհոսքը՝ վարկերի ստացում, բաժնետոմսերի թողարկումից ստացված միջոցներն են, իսկ արտահոսքը՝ վարկերի մայր գումարի մարում, շահութաբաժինների վճարումները:

(1.5 միավոր)

Գործառնական գործունեությունից դրամական հոսքերը հաշվարկելու համար կիրառվում է երկու մեթոդ.

1. Ուղղակի մեթոդ: Բացահայտվում են դրամական ստացումների և վճարումների հիմնական խմբերը:
2. Անուղղակի մեթոդ: Զուտ շահույթը կամ վնասը ճշգրտվում է ոչ դրամական գործառնությունների, հետաձգված գումարների և դեբիտորական/կրեդիտորական պարտքերի փոփոխություններով:

(1 միավոր)

Խնդիր 3. Մշակման և հետազոտության ծախսումներ

(ա)

- **Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** /մլն. դրամ/

Ծրագիր «Ա» 1 տարվա ամորտիզացիա (300 000 / 12) 25 000

Ծրագիր «Գ» նոր նյութերի ուսումնասիրությունը ծախսում է,

չի կարող կապիտալացվել 18 000

Ընդամենը 2025թ. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ 43 000

(1 միավոր)

- **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն** /մլն. դրամ/

Ծրագիր	Սկզբնական Արժեք	Կուտակված մաշվածություն	ԶՀԱ
--------	-----------------	----------------------------	-----

Ծրագիր «Ա»	300 000	(75 000)	225 000
------------	---------	----------	---------

Ծրագիր «Բ» (80 000 + 36 000)	116 000	-	116 000
------------------------------	---------	---	---------

	416 000	(75 000)	341 000
--	---------	----------	---------

Ընդամենը 31.12. 2025թ. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ 341 000

(2 միավոր)

բ) **ներկայացնել և քննարկել հետազոտության և մշակման ծախսումների սահմանումները և մոտեցումները ըստ համապատասխան ստանդարտների, բերել օրինակներ**

ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի համաձայն՝ ներստեղծվող ոչ նյութական ակտիվների գծով հետազոտության փուլի բոլոր ծախսումները **ճանաչվում են որպես ծախս** դրանց կատարման պահին, իսկ մշակման փուլի ծախսումները **կապիտալացվում են (ճանաչվում են որպես ակտիվ)** միայն որոշակի խիստ չափանիշների բավարարման դեպքում:

Եթե կազմակերպությունը չի կարողանում հստակ տարանջատել հետազոտության փուլը մշակման փուլից, ապա նախագծի բոլոր ծախսումները վերագրվում են հետազոտության փուլին և ամբողջությամբ ճանաչվում են որպես ծախս:

(1 միավոր)

Հետազոտությունը նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու ակնկալիքով կատարվող սկզբնական ու պլանավորված ուսումնասիրությունն է:

Ֆինանսական հաշվետվություններում բոլոր ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս (չեն կարող կապիտալացվել), քանի որ այդ փուլում հնարավոր չէ ապացուցել ապագա տնտեսական օգուտների առկայությունը:

Որպես օրինակ կարել է բերել՝

- Նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գործունեություն:

-Հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառման հնարավոր տարբերակների որոնում, գնահատում և վերջնական ընտրություն:

- Նոր կամ բարելավված նյութերի, սարքերի, արտադրանքների, գործընթացների կամ համակարգերի այլընտրանքների որոնում:

(1 միավոր)

Մշակումը հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառումն է նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքերի, արտադրանքների կամ համակարգերի արտադրության պլանավորման կամ նախագծման համար՝ նախքան առևտրային արտադրություն կամ օգտագործում սկսելը:

Որպես օրինակներ կարելի է բերել՝

-Նախաարտադրական մոդելների և նախատիպերի (prototypes) նախագծում և փորձարկում:

-Նոր տեխնոլոգիաներով գործիքների, կաղապարների և դրոշմների նախագծում:

-Փորձնական տեղակայանքի նախագծում և կառուցում (որը չի համապատասխանում առևտրային մասշտաբի արտադրությանը):

-Ընտրված այլընտրանքային նյութերի կամ արտադրանքների նախագծում և փորձարկում:

(1 միավոր)

գ) Ներկայացնել մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվի ճանաչման չափանիշները ՀՀՄՍ 38-ին համապատասխան

Հաշվապահական հաշվետվություններում մշակման ծախսումները կապիտալացվում են (ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ) միայն այն դեպքում, երբ ընկերությունը կարող է ապացուցել հետևյալ 6 պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. Ակտիվն ավարտին հասցնելու տեխնիկական հնարավորությունը:
2. Ակտիվն ավարտելու և այն օգտագործելու կամ վաճառելու մտադրությունը:
3. Ակտիվն օգտագործելու կամ վաճառելու կարողությունը:
4. Այն, թե ինչպես է ակտիվը գներացնելու ապագա տնտեսական օգուտներ (օրինակ՝ առկա է շուկա):
5. Մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը (տեխնիկական, ֆինանսական):
6. Մշակման ընթացքում ակտիվին վերագրելի ծախսումները արժանահավատորեն չափելու կարողությունը:

(3 միավոր)

Խնդիր 4. Պաշարներ

գ/ ներկայացնել Պաշարների ինքնարժեքի չափման բանաձևերը ՀՀՄՍ 2-ին համապատասխան

Սովորաբար փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը պետք է որոշվի դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Ծախսումների հստակ առանձնացումը նշանակում է, որ կոնկրետ ծախսումները վերագրելի են պաշարների որոշված հոդվածներին: Այս մոտեցումը տեղին է այն հոդվածների համար, որոնք նախատեսված են հատուկ ծրագրերի համար՝ անկախ այն բանից, դրանք ձեռք են բերվել, թե արտադրվել են:

(0,5 միավոր)

Պաշարների ինքնարժեքը, բացի վերոնշյալ դեպքից, պետք է որոշվի՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) կամ **միջին կշռված արժեքի բանաձևերը: ՎՄԱԵ մեթոդի կիրառումը ՀՀՄՍ 2-ով չի նախատեսվում:**

(0,5 միավոր)

Կազմակերպությունը պետք է կազմակերպության համար համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների համար կիրառի ինքնարժեքի նույն բանաձևը: Տարաբնույթ կամ տարբեր կիրառություն ունեցող պաշարների դեպքում ինքնարժեքի տարբեր բանաձևերի կիրառումը կարող է արդարացվել: Օրինակ՝ չի կարելի պատրաստի արտադրանքի մի մասը ելքագրել FIFO-ով, իսկ նույնանման մյուս մասը՝ միջին կշռվածով:

(0,5 միավոր)

դ/ նկարագրել ա) և բ) կետերում պահանջվող մեթոդների վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները, ինչպես նաև նկարագրել դրանց կիրառության նպատակահարմարությունը

Առաջինը մուտք՝ առաջինը ելք (ԱՄԱԵ)

Առաջինը ձեռք բերված ապրանքը վաճառվում կամ օգտագործվում է առաջինը: Վաճառքի ինքնարժեքը ձևավորվում է ամենափոքր կամ նախկինում գնված, ապրանքների գներով:

(0,5 միավոր)

Գնաճի պայմաններում ընկերությունները ցույց են տալիս ավելի բարձր շահույթ և պահեստում մնացած ապրանքների ավելի բարձր արժեք:

(0,5 միավոր)

Միջին կշռված արժեք

Հաշվարկվում է պահեստում եղած բոլոր ապրանքների միջինացված արժեքը՝ հիմնված տարբեր խմբաքանակների ձեռքբերման գների և քանակների վրա:

(0,5 միավոր)

Ընկերություններում հարթվում է գների տատանումների ազդեցությունները, ապահովում է միջինացված ինքնարժեք և կայուն արդյունքներ՝ անկախ գնաճից կամ գնանկումից:

(0,5 միավոր)

Տարբերում են այս մեթոդի կիրառման 2 մոտեցում՝

1. Պարբերական հիմքով հաշվարկված միջին կշռված արժեք
2. Շարունակական հիմքով հաշվարկված միջին կշռված արժեք

(0,5 միավոր)